ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Ն. Հովհաննիսյանի /լիազորագիր տրված՝ 22.01.2019թ./

Քննելով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2019թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/06 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ցիկլոիդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 18.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-

ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 29.11.2018թ. հայտ է ներկայացրել նաև <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նաև <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն: Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի /այսուհետ նաև՝ Կոմիտե/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ուսումնասիրվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով ԷԱ գնման ընթացակարգում հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների հրավերով նախատեսված որակավորման պահանջները հավաստող փաստաթղթերի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված հարցման պատասխանը գնահատող հանձնաժողովը որոշել է՝

ա/ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով ԷԱ գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ 50-րդ, 55-րդ, 76-77-րդ, , 89-րդ, 96-րդ, չափաբաժնի մասով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ին:

բ/ 42-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ, 62-րդ, 67-րդ, 70-րդ, 82-րդ, 91-րդ, 99-րդ, 118-րդ չափաբաժինների մասով մերժել Ցիկլոիդ ՍՊԸ-ին, քանի որ ՊԵԿ հարցման արդյունքում առկա է նշված չափաբաժանինների համար տրված գնային առաջարկի 1%-ից ավելի հարկային պարտավորություն:

գ/ Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Գնահատող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝

հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և սահմանվել է անգործության ժամկետ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 29.11.2018թ. /հայտը ներկայացնելու օրվա/ դրությամբ <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի /այսուհետ նաև՝ Քաղվածք/ համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չունի հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 2 բաժնի կողմից 21.12.2018թ. տրված թիվ 2082 տեղեկանքի համաձայն՝ <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 5000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի գծով հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ նման խնդրի առաջացումը պայմանավորված է իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ հարկային պարտավորության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերվել բացառապես ընկերության անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, իսկ այս դեպքում այն արտացոլված չի եղել և ընկերությունը հնարավորություն չի ունեցել տեղեկանալու այդ պարտավորության մասին:

Ընկերության կողմից բողոքի իրավական հիմք նշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 1-ին ենթակետը, Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, Կարգի 44-րդ կետը, Կարգի 45-րդ կետը և Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը 42-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ, 62-րդ, 67-րդ, 70-րդ, 82-րդ, 91-րդ, 99-րդ, 118-րդ չափաբաժինների մասով մերժելու մասին և նույն չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընկերությունը բողքին կից որպես ապացույց ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի և ՊԵԿ-ի կողմից 21.12.2018թ. տրված թիվ 2082 տեղեկանքի պատճենները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը մերժվել է վերոնշյալ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ և 47-րդ կետերի պահանջները: Գնահատող հանձնաժողովն իր որոշումը կայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան ստացված եզրակացության հիման վրա, համաձայն որի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ունեցել է 5000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները մերժվել են միայն այն չափաբաժինների մասով, որոնց նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը

գերազանցում է 1 տոկոսը: «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման փաստաթուղթը գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է անբավարար հաշվի առնելով Կարգի 44-րդ կետի հետևյալ դրույթը. «եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը համապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով 29.11.2018թ. հայտ է ներկայացրել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

2 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 13.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝

«Ցիկլոիդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Աճուրդի 42, 51, 58, 60, 62, 67, 70, 82, 91, 99 և 118-րդ չափաբաժինների մասով մերժել է «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս նշված չափաբաժինների մասով ունի ներկայացված գնային առաջարկի 1%-ից ավելի հարկային պարտավորություն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի 18.01.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված 23.01.2019թ. թիվ ԱԳ/ԿԲ/692-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված

«ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության» /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***29.11.2018թ.*** հայտ է ներկայացրել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ

կետի հիման վրա 13.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ցիկլոիդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Աճուրդի 42, 51, 58, 60, 62, 67, 70, 82, 91, 99 և 118-րդ չափաբաժինների մասով մերժել է «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս նշված չափաբաժինների մասով ունի ներկայացված գնային առաջարկի 1%-ից ավելի հարկային պարտավորություն:

ԳԲՔԱ-ԱՄ-2019/06 բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 29.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 29.11.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության 21.12.2018թ. թիվ 2082 տեղեկանքը՝ առ այն, որ 29.11.2018թ. դրությամբ Ընկերության 5 000 ՀՀ դրամ պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.12.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 5 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը մի շարք չափաբաժինների մասով գերազանցում է վեջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընկերության 29.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 29.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես. «Պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը 42, 51, 58, 60, 62, 67, 70, 82, 91, 99 և 118-րդ չափաբաժինների մասով մերժելու և նույն չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ